

Համախմբված Ֆինանսական
հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Պրոմ Գրուպ" ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քոնսալթինգ" ՓԲԸ



"Four A Consulting" CJSC

audit		accounting	advisory	assurance	
ՀԱՊ ՀԿ	Ռեեստր	1 20 0219		CAA NGO Register	1 20 0219
Հասցե	Նալբանդյան 50/136, ք. Երևան, ՀՀ		www.4aconsulting.am	Address	Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս	+374(10) 52 08 47		info@4aconsulting.am	Telephone	+374(10) 52 08 47

ԱՆԿԱԽԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

"Պրոմ Գրուպ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետիրոջը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Պրոմ Գրուպ" ՍՊԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի բաղադրականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Խմբի 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ների):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *"Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց

խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հասկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

27 մայիսի 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծնթ.		
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	2,639,354	3,681,460
Հետաձգված հարկային ակտիվներ	5	1,563,269	6,536
Տրված կանխավճարներ	6	788,154	19
		<u>29,762</u>	<u>3,688,015</u>
		5,020,539	
Ընթացիկ ակտիվներ		9,073,635	
Պաշարներ	7		1,297,567
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8		1,836,383
Տրված փոխառություններ	9	1,000,000	56,289
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	287,181	11,219
		<u>1,287,181</u>	<u>3,201,458</u>
Ընդամենը ակտիվներ			<u>6,889,473</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ		424,768	
Կապիտալ և պահուստներ		837,880	
Բաժնետիրական կապիտալ	11	231,488	439,139
Կուտակված շահույթ		<u>1,494,136</u>	<u>292,742</u>
			<u>731,881</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ		708,406	
Վարկեր, փոխառություններ	12	138,027	773,226
Ֆինանսական վարձակալություն	13	5,367,254	1,210,117
Հետաձգված հարկային պարտավորություններ	5	5,632	244,808
		<u>72,999</u>	<u>2,228,151</u>
Ընթացիկ պարտավորություններ		6,292,318	
Վարկեր, փոխառություններ	12	9,073,635	271,457
Ֆինանսական վարձակալություն	13	2,639,354	113,049
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	1,563,269	3,445,386
Եկամուտներին վերաբերող շնորհներ	15	788,154	6,100
Շահութահարկի գծով պարտավորություն		<u>29,762</u>	<u>93,449</u>
		5,020,539	3,929,441
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>9,073,635</u>	<u>6,889,473</u>

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ մայիսի 27-ին:

Հայկ Հունանյան
Տնօրեն



Հարություն Մայիլյան
Ներսիս Արմենիա ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
	Ծնթ.		
Հասույթ	16	9,350,022	11,421,078
Վաճառքի ինքնարժեք	17	(7,248,550)	(9,867,944)
Համախառն շահույթ		2,101,472	1,553,134
Այլ եկամուտ	18	81,088	90,004
Իրացման ծախսեր	19	(29,178)	(21,209)
Վարչական ծախսեր	20	(561,217)	(273,785)
Այլ ծախսեր	21	(127,840)	(657,338)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,464,325	690,806
Ֆինանսական ծախսեր	22	(312,706)	(211,609)
Փոխարժեքային տարբերությունից շահույթ /վնաս	23	(3,284)	6,399
Շահույթ մինչև հարկերը		1,148,335	485,596
Շահութահարկի գծով ծախս	24	(227,676)	(192,854)
Տարվա շահույթ		920,659	292,742
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		920,659	292,742

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս/ շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	400,000	782,800	1,182,800
Տարվա շահույթ 2024թ.	-	292,742	292,742
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	292,742	292,742
Կանոնադրական կապիտալի համալրում Շահաբաժին	39,139	-	39,139
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	439,139	292,742	731,881
Տարվա շահույթ 2025թ.	-	920,659	920,659
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	920,659	920,659
Կանոնադրական կապիտալի համալրում Շահաբաժին	560,861	-	560,861
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,000,000	287,181	1,287,181

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	920,659	292,742
Տարվա շահույթ		
Ծշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	497,221	792,978
Հիմնական միջոցների օտարումից վնաս	22,530	5,981
Շահութահարկի գծով ծախս	227,676	192,854
Ֆինանսական ծախս	312,706	211,609
Շնորհներից եկամուտ	(77,253)	(83,187)
Փոխարժեքային տարբերությունից շահույթ /վնաս	3,284	(6,399)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,906,823	1,406,578
Պաշարների փոփոխություն	-1,341,787	(66,371)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	273,114	(883,891)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,923,391	1,337,927
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	2,761,541	1,794,243
Վճարված տոկոսներ	(312,706)	(211,609)
Վճարված շահութահարկ	(263,979)	(8,290)
Գործառնակա գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	2,184,856	1,574,344
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(344,505)	(2,951,016)
Ծնորդի ստացում	76,785	84,526
Տրամադրված փոխառություններ, զուտ	(731,865)	609,624
Տրված կանխավճարներ	(538,802)	43,001
Ներդրումային գործունեության համար օգտագործված/ստացված զուտ դրամական միջոցներ	(1,538,387)	(2,213,865)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկեր և փոխառություններ, զուտ	85,510	1,009,707
Ֆինանսական վարձակալություն, զուտ	(347,259)	352,180
Կանոնադրական կապիտալի համալրում/ներդրում	560,861	39,139
Շահաբաժին	(926,220)	(782,800)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(627,108)	618,226
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	19,361	(21,295)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(818)	(980)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	11,219	33,494
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	29,762	11,219

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Պրոմ Գրուպ" սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2015թ. մայիսի 27-ին:

Մայր Ընկերությունը հիմնականում զբաղվում է բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարությամբ:

Մայր Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան 2-րդ նրբանցք, 10 շ., 21 բն.:

2025թ. Խմբի աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 131 մարդ, 2024թ.՝ 91 մարդ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների Համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ծանաչման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 25-ում:

2.5 Դուստր ընկերություններ

Մայր ընկերությունն ունի հետևյալ դուստր ընկերությունը.

2025թ. դեկտեմբերի 31 դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման ան երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ
Էնջլս Հաուզ ՍՊԸ	100	ՀՀ	2017	Տարածքի վարձակալություն

Մայր ընկերությունը Էնջլս Հաուզ ՍՊԸ-ն ձեռք է բերել 2024թ.:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքեր

Դուստր ընկերություն

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկվող (փոքրամասնության) բաժնեմասի:

Ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գույքի: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Չվերահսկվող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվապահական Հաշվեկշռի ամսաթվի դրությամբ չվերահսկվող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկվող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկվող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

Համախմբված արդյունքում չներառված գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները: Ասոցիացված ընկերությունների հետ իրականացված գործարքներից առաջացած չիրացված օգուտները հաշվանցվում են նույն ասոցիացված ընկերությունում համապատասխան ներդրման նկատմամբ:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.8711	3.71
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կառուցվածքներ	- 2-3 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	- 1-8 տարի
Արտադրական, տնտեսական գույք	- 1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 8 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 1-5 տարի
Ֆինանսական վարձակալությամբ ստացված ՀՄ-ներ	- 5-8 տարի:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.5 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային

արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.6 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում են այլ ակտիվի ինքնարժեքում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ճանաչվում են իրականացման պահին:

3.7 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին՝ մուտք, առաջին՝ ելք մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սպաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները,

որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Խմբի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում:

III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Խմբի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

V. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Խումբը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

VI. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով

գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը, փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.10 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Ծահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրաքանչյուր ռիսկերը:

3.12 Ծահույթահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում,

որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը հիմնականում ճանաչվում է շինարարական աշխատանքներից:

4 Հիմնական միջոցներ

	Հոդամաս	Շենքեր և կառուցվածքներ	Մեքենա սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Մետաղական կաղապարներ և այլ ՀՄ	Անավարտ ՀՄ	Ֆինանսական վարձակալությամբ ստացված ՀՄ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>									
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	13,371	396,923	59,495	42,481	212,706	-	987,428	1,712,404
Ավելացում	-	-	65,952	153,841	8,220	1,156	4,160	612,556	845,885
Դուստր կազմակերպություն	622,423	1,388,274	-	-	-	-	-	-	2,010,697
Կապիտալացում	-	-	297	3,909	6,559	80,596	-	3,073	94,434
Ներքին շարժ	-	-	-	-	-	(102)	-	-	(102)
Դուրս գրում	-	-	(8,753)	-	-	-	-	-	(8,753)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	622,423	1,401,645	454,419	217,245	57,260	294,356	4,160	1,603,057	4,654,565
Ավելացում	-	-	203,628	27,489	1,445	1,911	-	109,964	344,437
Կապիտալացում	-	-	68	-	-	-	-	-	68
Ներքին շարժ	-	4,160	-	-	-	(23,102)	(4,160)	-	(23,102)
Դուրս գրում	-	(3,734)	(456)	-	(1,428)	(95)	-	-	(5,713)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	622,423	1,402,071	657,659	244,734	57,277	273,070	-	1,713,021	4,970,255
<i>Կուտակված մաշվածություն</i>									
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	7,227	28,057	4,167	12,317	22,601	-	108,651	183,020
Տարվա ծախս	-	4,638	89,187	11,906	10,002	25,659	-	167,385	308,777
Դուստր կազմակերպություն	-	484,182	-	-	-	-	-	-	484,182
Դուրս գրում	-	-	(2,874)	-	-	-	-	-	(2,874)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	496,047	114,370	16,073	22,319	48,260	-	276,036	973,105
Տարվա ծախս	-	72,620	93,821	33,423	9,581	33,336	-	254,440	497,221
Դուրս գրում	-	(3,734)	(456)	-	(1,428)	(667)	-	-	(6,285)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	564,933	207,735	49,496	30,472	80,929	-	530,476	1,464,041
<i>Հաշվեկշռային արժեք</i>									
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	622,423	905,598	340,049	201,172	34,941	246,096	4,160	1,327,021	3,681,460
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	622,423	837,138	449,924	195,238	26,805	192,141	-	1,182,545	3,506,214

"Պրոմ Գրուպ" ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2025թ.

5. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է.

	2025թ.	2024թ.
Հազար դրամ		
Տարեսկզբի մնացորդ	(238,272)	(255,056)
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	15,853	16,784
Տարեվերջի մնացորդ	(222,419)	(238,272)

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2025թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հազար դրամ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	6,536	2,533	9,069
	6,536	2,533	9,069
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Վերագնահատման պահուստ	244,808	(13,320)	231,488
	244,808	(13,320)	231,488
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(238,272)	15,853	(222,419)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2024թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հազար դրամ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	2,877	3,659	6,536
	2,877	3,659	6,536
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Վերագնահատման պահուստ	257,933	(13,125)	244,808
	257,933	(13,125)	244,808
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(255,056)	16,784	(238,272)

6. Տրված կանխավճարներ

537,813 հազ. դրամ տրված կանխավճարը իրենից ներկայացնում է Ալբա Լիզինգ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին տրված կանխավճարը:

7. Պաշարներ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Վառելիք	17,411	20,066
Շինանյութեր	1,514,111	896,125
Արագամաշ առարկաներ	13,835	17,136
Անավարտ արտադրություն	1,091,321	362,684
Այլ	2,676	1,556
	2,639,354	1,297,567

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	856,270	1,316,216
Տրված կանխավճարներ	567,170	356,263
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	126,218	159,315
Այլ դեբիտորական պարտքեր	13,611	4,589
	1,563,269	1,836,383

"Պրոմ Գրուպ" ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2025թ.

Ապրանքների իրացումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 40 օր (2024թ.՝ 42 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

9. Տրված փոխառություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ	788,154	56,289
	788,154	56,289

Փոխառությունները տրամադրվել են անտոկոս և ցախհանջ:

Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ

Անվանում	31.12.2024թ.	Տրամադրում	Մարում	31.12.2025թ.
Հունանյան Հայկ -Տնօրեն/ Բաժնետեր	-	985,326	(247,172)	738,154
Թրենդ ՍՊԸ	6,289	-	(6,289)	-
Մնացական Եղիազարյան ԱԶ՝	40,000	-	-	40,000
Մարտին Արմենի Սեդրակյան	10,000	-	-	10,000
Ընդամենը	56,289	985,326	(253,461)	788,154

10. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	932	932
Մնացորդներ բանկերում	28,830	10,287
	29,762	11,219

11. Սեփական Կապիտալ

11.1 Բաժնետիրական կապիտալ

	2024թ.		2023թ.	
	բաժնեմասը (հազ. դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազ. դրամ)	բաժնեմասի չափը (%)
Բաժնետեր				
Հայկ Հունանյան	1,000,000	100	439,139	100
	1,000,000	100	439,139	100

11.2 Հահաբաժիններ

Խումբը 2025թ. հայտարարել է 926,220 հազ. դրամ շահաբաժին, 2024թ.-ին՝ 782,800 հազ. դրամ շահաբաժին:

12. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Փոխառություններ	259,640	29,793	-	181,006
Վարկեր	448,766	241,664	424,768	592,220
	708,406	271,457	424,768	773,226

Վարկեր

Վարկերի մնացորդը իրենից ներկայացնում է "Ալբա Բանկ" ԲԲԸ-ից ստացած վարկերն ու վարկային գիծը: Վարկային գիծն ու վարկերը տրամադրվել են 14.5-15%-ով՝ 1-5 տարի մարման ժամկետով: Վարկային գծի և վարկերի մնացորդը 31.12.2025թ. դրությամբ կազմում է 873,534 հազ. դրամ:

Փոխառություններ

Խումբը Հայկ Հունանյանից ունի ստացված անտոկոս կարճաժամկետ փոխառություններ, որոնց մնացորդները 31.12.2025թ. դրությամբ կազմում են 259,640 հազ. դրամ:

13. Ֆինանսական վարձակալություն

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Ֆինանսական վարձակալություն	138,027	113,049	837,880	1,210,117
	138,027	113,049	837,880	1,210,117

Ֆինանսական վարձակալության պարտավորությունն ներկայացնում է ԱԳԲԱ լիզինգ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից ստացված լիզինգային պարտավորությունը:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,890,002	2,441,684
Ստացված կանխավճարներ	3,322,269	905,705
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	93,139	53,529
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	77	75
Ընթացիկ պահուստ	50,384	36,309
Այլ կրեդիտորական պարտքեր	11,383	8,084
	5,367,254	3,445,386

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

15. Եկամուտներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	6,100	4,761
Տարվա ընթացքում ստացված ակտիվներ	76,785	84,526
Ընդհանուր եկամուտ	(77,253)	(83,187)
Տարեվերջի մնացորդ	5,632	6,100

16. Հասույթ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառք	8,038	52,765
Աշխատանքների կատարում	9,307,612	11,289,517
Ծառայությունների մատուցում	34,372	78,796
	9,350,022	11,421,078

17. Ինքնարժեք

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքի ինքնարժեք	7,424	49,896
Աշխատանքների կատարում	7,217,373	9,763,464
Ծառայությունների մատուցում	23,753	54,584
	7,248,550	9,867,944

18. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների վաճառք	-	5,879
Ընդհանուր եկամուտ	77,253	83,187
Արտարժույթի փոխարկում	-	895
Այլ	3,835	43
	81,088	90,004

19. Իրացման ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մաշվածություն և ամորտիզացիա	15	-
Նորոգման և սպասարկման ծախս	87	224
Տրանսպորտային ծախսեր	2,529	2,801
Ապահովագրական ծախսեր	26,479	18,114
Այլ	68	70
	<u>29,178</u>	<u>21,209</u>

20. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	236,225	98,584
Արձակուրդի պահուստ	14,075	20,324
Մաշվածություն և ամորտիզացիա	113,393	59,118
Նորոգման և սպասարկման ծախս	15,922	1,111
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	14,986	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,737	870
Գրասենյակային և կոմունալ ծախսեր ծախսեր	6,073	1,461
Առդիտորական և խորհրդատվական ծախսեր	17,365	15,000
Բանկային ծախսեր	15,892	15,376
Չփոխհատուցվող հարկերից ծախս	53,411	1,096
Նյութածախս	17,071	12,004
Վարձակալություն	51,715	43,678
Այլ	3,352	5,163
	<u>561,217</u>	<u>273,785</u>

21. Այլ ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դուստր կազմակերպության ձեռքբերման ծախս	80,180	646,610
Հիմնական միջոցների դուրսգրման ծախս	-	5,879
Արտարժույթի փոխարկում	5,048	2,249
Ծախսեր տույժերից և տուգանքներից	16,160	2,600
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	2,791	-
Տրված փոխառության դուրսգրում	6,290	-
Տրված կանխավճարի դուրսգրում	6,374	-
Այլ	10,997	-
	<u>127,840</u>	<u>657,338</u>

22. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկի տոկոսային ծախս	(144,908)	(54,406)
Ֆինանսական եկամուտ	1,038	110
Ֆինանսական վարձակալության տոկոսային ծախս	(168,836)	(157,313)
Զուտ ֆինանսական ծախսեր	<u>(312,706)</u>	<u>(211,609)</u>

23. Փոխարժեքային տարբերությունից շահույթ /վնաս

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</i>		
Տրված կանխավճարներ	(1,008)	-
Դրամական միջոցներ	(818)	(980)
Վարկեր և փոխառություններ	(2,981)	6,081
Կրեդիտորական պարտքեր	1,523	1,298

(3,284)

6,399

24. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	243,529	209,638
Հետաձգված հարկ	(15,853)	(16,784)
	227,676	192,854

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/վնաս մինչև հարկումը	1,148,335		485,596	
Շահութահարկ՝ 2024թ.՝ 18 % դրույքաչափով	206,700	18.00	87,407	18.00
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	20,976	1.83	105,447	21.70
Շահութահարկի գծով ծախս	227,676	19.83	192,854	39.71

25. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով ստեղծվում է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Խմբի ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 2-3 տարի կառուցվածքների, 1-8 տարի մեքենաների և սարքավորումների, 1-8 տարի արտադրական և տնտեսական գույքերի, 8 տարի տրանսպորտային միջոցների, 1-5 տարի այլ հիմնական միջոցների և 5-8 տարի ֆինանսական վարձակալությամբ ստացած ՀՄ-ների համար: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 5-ում, հետաձգված հարկային ակտիվները ձևավորվել են արձակուրդի և վերագնահատման պահուստներից: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ Խումբը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Խումբը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

26. Ֆինանսական գործիքներ

26.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3.8-ում:

26.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

“Պրոմ Գրուպ” ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2025թ.

Ֆինանսական ակտիվներ
Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	856,270	1,316,216
Տրամադրված փոխառություն	788,154	56,289
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	29,762	11,219
	<u>1,674,186</u>	<u>1,383,724</u>

Ֆինանսական պարտավորություններ
Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Ֆինանսական վարձակալություն	975,907	1,323,166
Փոխառություններ և վարկեր	1,133,174	1,044,683
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,951,846	2,486,152
	<u>4,060,927</u>	<u>4,854,001</u>

27. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Խումբը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

27.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույթային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա ձեռքբերումներից և վարկային գործարքներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	ռուբլի
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-
Տրամադրված փոխառություն	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	-	-	-
	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Ֆինանսական վարձակալություն	-	28,562	-
Փոխառություններ և վարկեր	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-
	<u>-</u>	<u>28,562</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	-	(28,562)	-
Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	ռուբլի
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-
Տրամադրված փոխառություն	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8,138	-	-

"Պրոմ Գրուպ" ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2025թ.

	8,138	-	-
Ֆինանսական պարտավորություններ			
Ֆինանսական վարձակալություն	-	42,224	-
Փոխառություններ և վարկեր	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	15
	-	42,224	15
Զուտ արդյունք	8,138	(42,224)	(15)

Խումբը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և Եվրոյի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն 2025թ.	Եվրոյի ազդեցություն 2025թ.	Ռուբլու ազդեցություն 2025թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	-	(2,856)	-
Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն 2024թ.	Եվրոյի ազդեցություն 2024թ.	Ռուբլու ազդեցություն 2024թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	814	(4,222)	(2)

զ) Տոկոսադրույքային ռիսկ

Խումբը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Խումբն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

28. Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

29. Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է բողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություններ 12-13-ում:

Խմբի ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	1,287,181	731,881
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(29,762)	(11,219)
Կապիտալ	1,257,419	720,662
Ընդհանուր սեփական կապիտալ	1,287,181	731,881
Վարկեր և փոխառություններ	2,109,081	2,367,849
Ընդհանուր ֆինանսավորում	3,396,262	3,099,730
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.37	0.23

30. Պայմանականություններ

30.1 Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ժամանակաշրջանի ընթացքում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթանյութերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը:

2025թ. պետական բյուջեի և վերջերս կատարված արտաքին գնահատման համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026 թվականին կանխատեսվում է աճի տեմպի աննշան դանդաղում:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Խմբի գործունեության վրա և արտացոլել է դա սույն ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Խմբի ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

30.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Խումբն՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Խմբի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ,

“Պրոմ Գրուպ” ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 31 դեկտեմբերի 2025թ.

գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական դրության վրա:

30.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր: Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

31. Գործարքներ կապակցված կողմերի միջև

31.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է բաժնետերերի կողմից:

Կազմակերպության գործարքներն կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

Հազար դրամ	Մնացորդ առ 2024թ. դեկտեմբերի 31	Գործարքի արժեք 2025թ.	Մնացորդ առ 2025թ. դեկտեմբերի 31
<i>Տրված փոխառություններ</i>			
Հայկ Հունանյան	-	738,154	738,154
<i>Ստացված փոխառություններ</i>			
Հայկ Հունանյան	181,006	48,841	259,640
Հազար դրամ	Մնացորդ առ 2023թ. դեկտեմբերի 31	Գործարքի արժեք 2024թ.	Մնացորդ առ 2024թ. դեկտեմբերի 31
<i>Տրված փոխառություններ</i>			
Հայկ Հունանյան	619,624	(619,624)	-
<i>Ստացված փոխառություններ</i>			
Հայկ Հունանյան	16,157	164,849	181,006

31.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Մայր Ընկերություն՝		
Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	43,758	28,189
	43,758	28,189
Դուստր Ընկերություն՝		
Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	1,248	1,144
	1,248	1,144

32. Գրավներ

Ընկերությունը ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ-ում ունի հետևյալ գրավադրումները՝

- ✓ Շինություն (հողամաս 2.500836 հա, արտադրական մասնաշենք 9240.6 քմ, վարչական շենք 1518.2 քմ, պահակատուն 23 քմ, կաթսայատուն 457.8 քմ, ենթակայան 97.8 քմ, կոմպրեսորային 44.2 քմ, թերմոպլաստի արտադրամաս 335.8 քմ, պարիսպ 230.8 քմ, Երևան, Աջափնյակ Գ. Զոհրապի փողոց 124/1):
- ✓ Պրոմ Գրուպ ՍՊԸ-ին պատկանող ԷՆՋԼՍ ՀԱՈՒՋ ՍՊԸ-ի 100% բաժնեմասը: